

ՀԱՅ Բ

Հ Ա Ն Դ Ե Ս

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Կ Ը Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Ի Ա Մ Ե Ն Ա Մ Ս Ո Յ 1 Ի Ն Ե Ի 15 Ի Ն

Տէր և Խմբագիր — Մ. Ս. ԳԱՐԻԻԷԼԵԱՆ

Editor — M. S. GABRIEL M. D.

202 W. 23d St., New York.

Տարեկան բաժնեգիրն է ամեն երկրաց համար 2 թալէր կամ 10 Ֆրանք:

Բաժանորդագրութիւնք կը հաշուին Յունվար 1 էն:

Entered as second-class mail matter. at P.O. New York. NY

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Շնորհաւորական հեռագիր Հայկական Միութեան առ Խորհման րիկ. — Մեծ Մարդեր Հայոց Մէջ. — ՀԱՅԲ. — Ա. ղէտք Ձէյթունի. — Նամակ Վանէն. — Նամակ Եգիպտոսէն — Հայ Գաղթականութիւն Ի Ֆրէզմոյ Քալիֆորնիոյ. — Հայոց Խրախուսական Միաբանութիւն Ի Սուրաբայա. — Քաղաքական, Ազգային և զանազան լուրեր:

ՀԵՌԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Ա Ռ

ԽՐԻՄ ԵՆ ՀԱՅՐԻԿ

ՅՈՒՆԻՍ 4ին, ընդհանուր ժողովոյ որոշմամբ հեռաւեան հեռագրեց Հայկ. Միութեան առ Խորհման Հայրիկ:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ ԵՐՁԱՆԻԿ Է ՇՆՈՐՀԱՆՈՐԵԼ ՁԵՐ ԱՄԵՆԱՊԱՏՈՒՄԻՍԵԱՆ ՄԻՍ. ՁԱՅՆ ԱՆՈՒԱՆՈՒՄԸ ԻՐԵՆԻ ԱՌԱՋԻՆ ԸՆՏՐԵԼԻ ԿԱՌՈՂԻՅՈՒԹԵԱՆ:

ՄԵԾ ՄԱՐԴԵՐ ՀԱՅՈՑ ՄԷՋ

Ճշմարտապէս ըսուած է թէ աշխարհի պատմութիւնն մեծ մարդոց պատմութիւնն է: Հայոց պատմութիւնն ալ մեծ Հայերու պատմութիւնն է:

Մեծ Հայերու չափն և թիւն ճշգրտով է որ պիտի կարենամք մեր ազգային մեծութեան չափն ճանաչել:

Ա

ՄԵԾ ՀԱՅ ԹԱԳԱՆՈՐԵՐ

Ամեն ազգի մէջ ալ մեծագոյն մարդն թագաւորն է նկատուած: Թագաւորն քաղաքակրթութեան առաջին և յոյժ տեսական պատուէնէն է: Վայրենիք ոչ որժանի և ոչ կարող են թագաւոր ունենալու, քանզի նոքա անկարգ անկանոն գործունէութենէ կ'ախորժին, իրենց կրից և բնագոյմանց հետեւիլ կ'ուզեն ոչ թէ օրինաց և կարգաց: Ընդհակառակն, քաղաքակրթեալ ժողովուրդն կարօտ և բաղձացող է կարգի կանոնի, որոյ գերագոյն ղեկավարութիւնն ազգին այն անհատին ձեռքն կ'ուզէ

տեսնել որ քան զամենայն քաջ, արդարասէր, խնամալի և կարող մարդն է — նա է թագաւորն:

Հայաստան շատ յուռթի երկիր մ'է, և մշակին ու հովուին քրտինքն առատօրէն կը վարձատրէ: Առաջին պատմական նշուլից մէջ իսկ Հայք կ'երևին լինիլ աշխատասէր ժողովուրդ, հովիւ, մշակ և վաճառական, և Հայաստանն բարեկից երկիր, այնպէս որ անկէ անցնող օտարականք ապշած կը մնային անոր առատութեան և լիութեան վերայ: Այս այսպէս լինելով չենք զարմանար եթէ Հայ ժողովուրդն շատ կանուխ ունեցած լինի թագաւոր — այսինքն խաղաղ աշխատութեան և կարգ կանոնի անհրաժեշտ պայմանն:

Կարծեմք թէ մեր հողոյն արգաւանդութիւնն և մեր աշխատասէր բնաւորութիւնն կրնան գոհացուցիչ բացատրութիւն մ'ընծայել ուրիշ հետաքրքրական երևոյթի մի: Մեք աշխարհակալ թագաւորներ ունեցած չեմք: Հայ թագաւորք վիթխարի բանակաց գլուխ անցած օտար երկիրներու վերայ արշաւած չեն: Մեր ազգ պաշտպանողական դիրք առած է: Եւ միթէ զարմանալի՞ է այդ քանի որ Հայն կուշտ ժողովուրդ մ'եղած է և Հայաստան չէն երկիր: Հայերն պէտք և փափաք չունէին օտար երկրներու վերայ յարձակիլ կողոպտելու սիրով, այլ գոհ կը մնային իրենց իրենց քրտանց առատ արդիւնքն վաճելով: Հայ թագաւորներն ալ Հայ ժողովուրդեան ծոցէն և բնութենէն լինելով, երկասէր ժողովուրդեան պահպան հովիւ եղած են օտար գալիքն փախցունելու ոչ թէ իբրեւ գալլ յարձակելու օտար հօտերու վերայ:

Այս պատճառաւ է որ մեք Հայոց Պատմութեան մէջ չեմք կրնար ցուցնել այնպիսի թագաւորներ որք Կիւրոսի, Աղէքսանդրի, Կեսարու հետ բաղդատուին: Մեք Հայ թագաւոր չունիմք որ դրացի և ցեղակից ազգաց թագաւորներն խելքի կամ զինու զօրութեամբ ի նիզակակցութիւն բերած և անոնց գլուխն անցնելով պատմական մեծ դեր կատարած լինի: Հայաստան երբէք Արեւելից քաղաքականութեան կամ քաղաքակրթութեան կեդրոն եղած չէ: Երկրորդ կարգի տէրութիւն մ'եղած է նա միշտ, և արբանեակ՝ հզօրագոյն կեդրոնի մի — Ասորեստանեայց, Պարսից, Սելեւկեանց, Հռովմայեանց:

Միայն Տիգրան Բ. ի օրով Հայաստան կեդրոն եղաւ արեւելից, և մեր թագաւորն եղաւ և կոչուեցաւ Մեծ: Բայց և այդ քիչ ժամանակ տեւեց: Հռովմայեցիք իրենց գերազանց քաղաքականութեամբ և գերազանց զինուորականութեամբ խոնարհեցուցին զՏիգրան և հարկատու ըրին զնա:

Ուրեմն մեր թագաւորներէն անոնք որք մտքի և հոգւոյ մեծութիւն ունեցած են և զինուորական տա-

զանգ և մեծ Կղած են թողալին սահմաններուն մէջ, կամ իրեն զգնական և նիզակակից օտար գլխաւոր դերակաւարի: Հետեւեալէս մեր ազգի քաղաքական պատմութիւնն արեւելեան պատմութեան կեդրոնական հոսանքին մէջ երբեք մտած չէ: Հայոց քաղաքական պատմութիւնն միջադէպային, երկրորդական է աշխարհի պատմութեան մէջ, և մեծ թագաւորներու արեւելեան ցոյցին մէջ հայ թագաւորներու անուն չկայ:

Այդ մեծ վիշտ չէ մեզ: Կրնամք գոյն մեզ ի պարծան համարել մինչև անգամ: Աշխարհակալ թագաւոր մի իրօք մեծ է միայն այն պայմանաւ որ բարձրագոյն քաղաքակրթութեան մի բարիքն ու ճամբաներն մոծանէ աշխարհական երկիրներու մէջ: Սակայն ո՞րքան սահաւուց բազմն եղած է այդ: Մեզ համար գոնէ այն զսվելի բանն ունիմք որ եթէ քաղաքակրթիչ կեդրոնի դեր չէ կատարած Հայաստան, գոնէ աշխատասէր և խաղաղասէր եղած է, ոչ յարձակող և յափշտակող սրպէս սուս քաղաքակրթ ազգերն, որոց մեծ թագաւորներու շատն մեծ աւազակներ միայն են:

Բ

ՀԱՅ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՒ ԳՐՈՂՔ

Բարոյական կարգին մէջ մեծ է այն մարդն որ իւրածին խորհուրդներ կ'ընծայէ աշխարհի: Կրնայ նա կրօնական ունի լինիլ և կոչուիլ քահանայ՝ սուրբ՝ հայրապետ, կամ աշխարհական լինիլ և կոչուիլ իմաստասէր՝ գրող՝ օրէնսդիր՝ բարեկարգիչ՝ յեղափոխ:

Հայոց պատմութիւնն կը ներկայացունէ մեզ քաջ թագաւորներու թիւ մի, և տաղանդաւոր մարդոց շատ աւելի մեծ թիւ մի կրօնական և աշխարհական գաւազներէն:

Եկեղեցական կարգին մէջ քան զամենայն մեծն ու պատկառելին է Ս. Գրիգոր, որ Լուսաւորիչն եղաւ Հայաստանեայց աշխարհին: Մեծ է ներսէս որ կազմակերպիչն եղաւ կրօնական և բարեփոխական հաստատութեանց և կարգաց: Մեծ են Սահակ և Մեսրոպ՝ որք Հայկական գրականութեան փառաւոր հիմունքն հաստատեցին և որոց շնորհիւ իմացական նոր կեանք մի սկսաւ Հայաստանի մէջ:

Մեսրոպայ դարն յիշաւի՝ մեր գրականութեան ոսկեդրինի դարն կը կոչուի: Ոչ անկէ առաջ և ոչ անկէ յետոյ մինչև այսօր հայ ազգին մէջ անսնուած չէ այնպիսի իմացական տրթնութեան և գործունէութեան շրջան: Շարժումն ազգային էր, թագաւորն Վառաձապուհ, Սահակ Հայրապետ, և աւագ ուսուցիչն Մեսրոպ շարժման գլուխն էին: Բիւզանդիոն, Աղէքսանդրիա, Աթէնք Եգիպտոս և Կեսարիա յղուեցան ուսեալ տաղանդաւոր հայ երիտասարդներ որպէս զի լեզուն, փիլիսոփայութիւն, պատմութիւն, աստուածաբանութիւն ուսանին և վերադառնալով ի Հայաստան մշակեն անդ հայ միտքն ու գրականութիւնն: Այդպէսով ունեցաւ ազգն իւր պանծալի վարդապետներն ու գրողներն — Եզնիկ Կողբացի, Մովսէս Խորենացի, Կորիւն, Յովսէփ, Ղեւոնդ, Յովհան Եկեղեցացի, Յովսէփ Պաղնացի, Մամբրէ Վերածնող, Ղազար Փարպեցի, Խոսրով, Դաւիթ անյաղթ, Եղիշէ, Ստեփաննոս Ասողիկ, Արձան արժրունի, Գիւտ, Յովհան Մանգակունի ևն:

Դոցա ամենն ալ տաղանդաւոր մարդիկ են, թէև ի հարկէ աստիճանի զգալի տարբերութիւններ կան նոցա մէջ: Ոմանք այնպիսի ոճով գրած են իրենց հեղինակութիւններ որ ինքնին երաշխիք մ'է գրողին տաղանդին: Օրինակի համար Եզնիկ այնպիսի քերականական սքանչելի շարադրութեամբ գրած է «Եղծ Ողանդոց» գիրքն որպիսեալ միայն ընտրեւագոյն մատենագրողք կրցած են գրել ամեն ազգաց և դարուց մէջ: Քերականական ոճոյ գերագանցութիւնն անհնար է հասարակ մտաւորական ուժի տէր մէկուն համար: Խորենացոյ ո-

ճըն լի է կորովով, և յայտնապէս հզօրամիտ հեղինակի գրչի արդիւնք:

Ահաւասիկ թէ ինչ վկայութիւն կուտայ օտարական մի, Ս. Մարթէն, իւր «Յիշատակք զՀայաստանէ» անուն Փռանտերէն գրոց մէջ, ի մասին գրական արժանեաց մեր ընտիր մատենագրաց. — «Շատ ստոյգ է, կըսէ, թէ հայ պատմագիրք ունին արժանիքն շատ աւելի խրոմով ընտրելու դէպքերն զորս կը պատմեն, քիչ կարեւորութիւն ունեցող սակաւ դէպքեր միայն տեղեկագրելու, և իրենց աշխատասիրութեան ոճն աւելի խնամելու քան զարար և քան զպարտիկ պատմագիրս, կարելի է մինչև անգամ ըսել թէ նոքա (Հայերն) շատ գերազանց են Ստորին-Կայսրութեան յոյն մատենագրաց շատին: Գալով ստացուածոց գեղեցկութեան և ոճոյ վայելչութեան, նոքա չունին այն խօլ երեւակայութիւնն որով կը յափշտակուին ուրիշ արեւելեան մատենագիրք երբ պերճախօս լինել կուզեն: Առանց իսպառ թողուլ արեւելեան ոճն, հայ պատմագիրք գիտեն հրաժարիլ այն սարօրինակ բաղդատութիւններէ, այն սնափառ և յաճախ ուրսառոց փոխաբերութիւններէ որք արարական և պարսկական ճարտասանութեան յատուկ հանգամանքն են. կրնամք մինչև իսկ ըսելառանց չափազանցութեան, թէ կան Մովսէս Խորենացոյ, Եղիշէի, Ղազար Փարպեցոյ և Յովհաննէս Զ. կաթողիկոսի նմաններն ալ որք անարժան չեն եւրոպացի ընթերցողի մի ուղարկութեան, իրենց պերճախօսութեամբ, իրենց ոճոյ յարատեւ մաքրութեամբ և իրենց աստեղափոխական պարպերութեանց գիտնական յօրինուածութեամբ, և որք կրնան դեռ իրենք զիրենք ընթերցուլ տալ շահեկանօրէն յետ այն մեծ օրինակաց զորս մեք ունիմք և յետ այն գրական գլուխ գործոց զորս նոյն իսկ Հռովմ և Յունաստան արտագրած են:»

Այս առդեր աւելի մեծ գովեստ են մեր ազգային հանճարին քան վերի վերոյ նկատողութեամբ կը թուին: Հայ ցեղն առիական և եւրոպեան բնաւորութեա միանգամայն հաղորդ է. նորա լեզուն, նորա մատենագրաց ոճն և խորհելու կերպերն, նոյն իսկ այն իրողութիւնն թէ Հայեր հնաեւրոպական ազգաց առաջինն եղան յարեւել ընդգրկելու քրիստոնէական կրօնն մինչ Պարսիկք միացին յարեւել ի կրակապաշտութիւն, կը ցուցնեն այդ ամենայն թէ Հայն ոչ միայն աշխարհագրական գրիւք այլ և բնաւորութեամբ և ցեղաբանօրէն կամ մուրշն է ընդ մէջ եւրոպայի և Ասիայ, և գերազանցապէս յարմար է եւրոպեան քրիստոնէայ քաղաքակրթութիւնն փոխանցելու յԱսիա:

Բայց կը մնայ դեռ պատասխանել կարեւոր հարցի մի — եթէ ճշմարտիւ Հայ ցեղն տաղանդաւոր մարդիկ իւր ծոցէն հանած է Ե գարուն մէջ, և եթէ Հայք մտաւորական այդքան խնամութիւն ունին Յունաց և եւրոպայի մեծ ազգաց, ո՞չք են մտքի աշխարհին, գրոց աշխարհին մէջ մեծ հանդիսացած Հայեր: Ո՞չք են այն հայ երկասիրութիւնք, որք մարդկային սեռին մտաւորական գանձուն մասն կազմեն: Ունեցած եմք հայ պատմագիր մի իբրեւ զՀերոդոտ, կամ հայ իմաստասէր մի իբրեւ զՍոկրատ, կամ հայ ատենախօս մի իբրեւ զԴեմոսթեն, կամ հայ բանաստեղծ մի իբրեւ զՄիլթըն, կամ հայ քահանայ մի իբրեւ զԼուսեր:

Կը պատասխանեմք թէ չեմք ունեցած այդպիսի գրող կամ խորհող որոյ շնորհիւ աշխարհ իւր մտաւորական յառաջդիմութեան ընթացքին մէջ նոր քայլ մի առած լինի: Մեր բարոյական կարգի մեծ Հայերն ալ նըման մեր մեծ թագաւորաց՝ եղած են մեծ մեզ համար, նոցա մեծութիւն Հայաստանի ուսմաններն անցած չէ: Թէպէտ ունեցած եմք մատենագիրներ զորս հաճութեամբ կրնան ընթերցուլ եւրոպացիք, բայց դոքա աշխարհի գրականութեան վերայ այնպիսի յաւելումներ չեն որք եթէ ամբողջն զեղջուէին, մարդ կուրթիւնն զգալի կուրուստ մ'ընէր:

Գ

Մեր մեծ թագաւորաց և մեծ գրողաց չափերն այնպէս ճշդ ելէ յետոյ կը մնայ փոփոկ կէս մի ստիւգէլ: Սիւղ եօք Հայոթիւնն այդպիսի չափաւոր մեծութեամբ մարդեր միայն կրնայ հանել իւր ծոցէն թէ ընդունակ է տիեզերական մեծութեամբ մարդեր ևս տալ աշխարհի:

Ընթերցողք գիտեն մեր տեսութիւն այդ խնդրոյ մասին: Մեք կ'առնեմք թէ Հայ ցեղն սպառած չէ, թէ նա յանցելուն տուած չէ իւր լուսագոյն պոռոզներ, և թէ նա պատեհութեան կապտէ իւր լայնագոյն զարդացման հասնելու և իւր ընտրելագոյն արդիւնք տալու աշխարհի, արդիւնք որք մարդկութեան յաւիտենական գանձուց մասն կազմեն:

Հայն փափաք չունի աշխարհի մեծ թագաւորներ ընծայելու կամ քաղաքական առաջնորդող դեր կատարելու. բայց ընդունակ է այս ինչ պայմանաց մէջ իւր ծոցէն հանելու Պոսիւէներ, Տանթեր, Գառլայլներ, Փասթէօներ և Տարուիններ:

Ինչո՞ւ համար Հայն անցեալ երեք հազար տարուան մէջ չէ տուած իւր լուսագոյն արդիւնք, և ինչ են այն պայմանք և միջոցք որովք պիտի կրնայ նա այսուհետեւ գարգանալ և իւր հանճարի արտադրութեամբք ծառայել մարդկութեան, այդ է ինչիւրն զոր կը վերապահեմք քննել առաջիկայ թուով:

ՀԱՅԲ

«Աղէտք Զէյթունի» խորագրով յօդուածն զոր մաս առ մաս կը հրատարակեմք, մեր մասնաւոր խնդրանքք գրուած է քաջաց քաղաքին այն յուզմանց մօտէն և անձամբ քաջ իրադեկ անձի մի կողմանէ: Յօդուածն օտար լեզուաւ խմբագրուած է, զոր մեք կը թարգմանեմք Հայերէնի:

Այդ յօդուած երկու նպատակաւ կը հրատարակեմք. նախ մերայնոց ծանօթացնելու Զէյթունի կարեւոր անցից և ազէտներու սրտածովիկ պատմութիւնն. երկրորդ ցուցնելու թէ թուրք կառավարութեան հաշտեաց քաղաքականութիւնն չեմք չափազանցեր որպէս թրքաւէր օտարականք և հիւպատոսք ունեք կ'ըսեն. անհերքելի ապացոյցներու ահագին քանակութիւն գիշուած ունիմք, և Զէյթունի պատմութիւնն իսկ ինքնին բաւական պիտի լինէր հաստատելու թէ թուրք կառավարութիւնն Հայ ցեղն սկիստացնելու գիւշաւնչ քաղաքականութիւն մ'որդեգրած է, զոր ի գործ կը դնէ՝ ոչ ի պետութեանց երկնչելով և ոչ ի քաղաքակիրթ աշխարհէ ամաչելով:

Վանէն գրուած նամակն օտարականի գրչէ է, զոր Հայերէն թարգմանելով կը հրատարակեմք ներկայ թուով: Այդ նամակի մէջ մեր պատահական թղթակիցն մանր լուրեր չհաղորդեր այլ Վանայ Հայոց արամադրութեանց նկատմամբ ընդհանուր տեղեկութիւն կուտայ: յորմէ կը մակարեւեմք թէ հոն ալ ժողովուրդն երկու մասանց բաժնուած է. մի քանիներ իսլ յեղափոխական են, որ առանց գործոյն գծուարութեանց տեղեկակ լինելու յախուռն և մինչև իսկ անարդար դիմադրութիւններ ընելու բաղձացող են, իսկ միւս մասն այդպիսի անկարգ դիմադրութիւններն փնտաւար համարող խոհեմներէ կը բաղկայնայ: Զգիտեմք թէ ս'ըր են և ս'րքան կան այնպիսիներ որք անխոհեմ խօսականաց և երկչոտ խոհականաց մէջտեղ կը գտնուին — որք պատեհ ժամուն և արդար եղանակօք կեանքն դնել յօժար են արդարութեան համար:

Վանի նամակին մէջ յոյժ ողբալի կետ մ'ալ պարզուած է — այն թէ Հայ երեւելիք իրար վար քաշելու համար բազում ծախք և նեղութիւն յանձն կ'առնուն: Այդ

կը տեսնուի գրեթէ ամեն ուրիշ քաղաքի մէջ և յատուաւ մանի ևս — ամեն ուր որ Հայեր մէկտեղ գալով գործ մ'ընել կը ձեռնարկեն, կռիւ կը ծագի, և բուն գործն զոհ կը արուի կռիւներուն: Հայ ցեղն ներքին կռիւներով սկիստացած է և ներքին կռիւներով պիտի ըսպառի, մեռնի: Հայն ազգային անձնատպանութեամբ պիտի վերնայ աշխարհէս եթէ այսպէս չարունակէ:

— Շնորհակալութեամբ կը ծանուցանեմք թէ Գոն. Նէթիթըթէն համակրող ոմն երեք թաւէն նուիրած է ինպատա թերթիս հրատարակութեան:

— Ներկայ թուով «Հայք»ի ներկայ տարւոյ առաջին վեցամսեակն կ'աւարտի:

ԱՂԵՏՔ ԶԵՅԹՈՒՆԻ

(Տես թիւ 11)

Իրաց այս ցուալի վիճակ այնպէս մի քանի տարի կը շարունակէ. կառավարութիւնն այս արոց տակ կը ճնշէ զԶէյթուն մերթ առաւել մերթ նուազ խոտութեամբ այլ անդադար Այդու ևս դոհ չլինելով՝ չըջալայ իսլամ ժողովրդոց հարստահարութեանց գործերն ալ Զէյթունցոց կը վերագրէ յաճախ: Զարմանալի կը թուի որ այս քաջեր այսպիսի անսովոր նեղութեանց ենթարկուած՝ իսկոյն չեն փարիս իրենց զինուց և չեն ապստամբիր: Բայց Զէյթունցոց մէջ քաղաքականութեան ծանօթ անձնաւորութիւններ չեն պակսիր: Ծառ խոհական միջոցի կը դիմեն նախ: Կ. Պոլսոյ ազգային պատրիարքարանին կը տեղեկագրեն իրաց վիճակն: Պատրիարքարանն Բ. Դրան թագրիւր կը մատուցանէ, Բ. Դուռն Հալէպի կուսակալութեան, կուսակալութիւնն Մարաշի կառավարչութեան հրաման կը յղէ որ այս արոց խնդիրն կարգադրեն: Այս հրամաններու շարքն առաւել քան միանգամ տեղի ունենալէ յետոյ, վերջապէս պաշտօնեայ մի կուգայ, և կարգադրիչ յանձնաժողով մի կը կազմաւի, որ գործի կը ձեռնարկէ: Տոմարներն ձեռք կ'առնուն, մէկ ծայրէն նստէն կը սկսին, օր մի մինչև երեկայ կը շրջին և տներու աւելի համեստ գներ կը դրնեն: Յաջորդ առաւօտուն պաշտօնեայք կը ժողովին և սա խնդիրն կը յարուցանեն. երէկ այսչափ դամար զեղչեցինք, այդ գեղչեալ գումարն ս'ր տներու վերայ պէտք է այժմ յաւելունք, պէտք է նախ դա'յն սրչեցնք:

Տէ'ր իմ, կը պատառտանեն, արդէն ամենուն ալ բեռն ծանր է, ուրիշ տեղ չկայ բեռ դնելու. բայց եթէ ի շրջին գտնենք այնպիսի տներ որոյ գինն չափազանց վար նշանակուած գտնենք, անոնց վերայ յաւելում մի կ'ընենք: — Ո՛չ, փառիշահին գանձուն փնտա կուգայ. Զէյթունի տուրքն պէտք է միայ ամբողջ, ուստի եթէ յամանց գեղչեմք, հարկ է որ այլոց վերայ դնեմք:

Վերջապէս չկրնալով համաձայնիլ, պաշտօնեայք կը թողուն կ'երթան և Զէյթուն կը թողուի իր գլխուր ճարն նայելու:

Ժողովուրդն բարեկարգութ նէ կը յուսահատի: Մասնաւորապէս աւելի խառն հարստահարեալներն ու մանք կը բորբոքին, և չըջալայ գիւղերու խառններուն հարստահարութեանց փոխարինել կը սկսին, և այլ ևս քաղաք չերթալով լեռն կը բնակին: Պապիկ անուն քաջարի պետն ալ այդ խմբին գլուխն անցնելով կամայ կամայ կ'աճի թիւն մինչև 30ի:

Կառավարութիւնն իւր կոնխամքածեալ խաղն խաղալու պատեհ ժամն հասած կը գտնէ և կը սկսի «ապստամբութիւն ապստամբած են» պօռալ: Բ. Դուռն ալ ազդու միջոցով այս ապստամբութեան վերջ տալ կը որոշէ: Հրաման կը արուի որ բանակ երթայ Զէյթունի վերայ: Երկու փաշա հանդ երծ գինուորաց փաշտերով կը հասնին Զէյթունի արեւմտեան կողմն, վրաններն կը հաստատեն, և քաղաքն կրակելու կազմ և պատրաստ

կը կենան: Ամերիկացի միսիոնար ոմն Հոն գտնուելով՝ գէպքին կը տեղեկանայ և անմեղ ժողովրդեան թեր ելնելով կ'երթայ փաշային վրանն կ'այցելէ գիշերային, կը ցուցնէ թէ ժողովուրդն հնազանդ հպատակ է, և թէ լեռն ելած խումբ մի մարդոց համար ժողովուրդն պատուհասել օրինաւոր չէ:

Փաշան կը վարանի սակայն թնդանօթաց բերանն Ձէյթունէն դարձունելու և առանց չահատակութեան վերադառնալու: Ի մեծ ուրախութիւն իւր ահա մի առիթ կը ներկայանայ: Ձէյթունն զարնելու համար բանակ եկած լինելուն լուրն լսելով՝ շրջակայ հայ գիւղերէն գինեալ քաջեր թուով իրր երկու հարիւր՝ կը վազեն Ֆրնուզի առաջնորդին օգնութեան, և յանկարծակիի գալով քաղաքին մօտ յարձակում կը կրեն և թեթեւ մարտէ մի յետոյ իրենցմէ 70 հոգի կը ձերբակալուին, և առաջնորդն ինքնին կը ձերբակալուի, զոր միայն չապիկով մի, գլխիբաց և բոկոսն, երեսն թքնելով և ծեծելով կը տանին Մարաշ մեծ աղմկով և հանդիսաւորութեամբ: Անտի գառաջնորդն կը յղեն ի Կ. Պոլիս, միւսներն ի Հալէպ: Երբ կարգն ապստամբաց ձերբակալման կուգայ, զայդ ընել դիւրին չըլլալով՝ նոցա ոմանց ընտանիքն և Պապիկ ապստամբապետին ծերունի մայրն իրենց տներէն քաշելով կը տանին Հալէպ: Այդ միջոցին խնդրոյն կը միջամտէ անդղիսական հիւպատոսն Հալէպի, Մր. Հէնտըրսըն, և կիները կ'ազատէ: Իսկ բանտարկեալներուն դատն տարիներով երկարաձգեցին, այնպէս որ Հալէպի և Մարաշի բանտերուն մէջ ոչ սակաւուց մեռնելէն յետոյ մնացեալք արձակուեցան:

Թուրք կառավարութիւն Ձէյթունցոց սրտերն դառնութեամբ և բարկութեամբ բուսական լեցուցած լի ներով՝ կրնար այլ ևս պայթման սպասել հանդարտ, ուստի ընդհանուր ներողութիւն հրատարակեց: Միւս կողմանէ զանազան ճնշումներ ի գործ դնել շարունակեց, մանաւանդ ապստամբներն բռնելու պատճառաւ քաղաքին մէջ զինուորներ դրաւ, և սոքա օր քան զօր աւելի համարձակութեամբ նեղեցին ժողովուրդն: Վերջապէս զօրաց և Ձէյթունցոց միջև հակառակութիւնն յետին աստիճանին հասաւ, և զօրքն անհամբեր առթի կը սպասէր ժողովուրդն հոտորելու համար: Զօրքն կրակելու հրամանն վերջապէս ստացած կը յարձակի քաղաքին վերայ, և Ձէյթունցիք ալ իրենց վրէժ լուծելու ահաւոր ժամն հասած գտնելով կը սկսին սոսկալի դիմադրութիւն մ'ընծայել: Պատերազմն կը տևէ իւր երկու ժամ, զօրքն կը սկսի փախչիլ, ժողովուրդն կը յարձակի պալատին վերայ, գտնձ գտնելու յուսով կը խորտակէ սնաուկներն որք պարտաւ կը գտնուին, բանտի դռներն կը խորտակէ և բանտարկեալներն կ'արձակէ, պալատն կ'այրէ, զօրաց Հաղարապետն ինքնին նեղն կիյնայ և մի քանի կիներու շնորհիւ կրնայ փախչիլ՝ թողնով սա կայն իւր ոսկի ժամացոյցն և շղթայն ի ձեռն Ձէյթունցոց: Քաջ զօրաց թողած զէնքերն ժողովէ յետոյ կը դադարին:

Դիւրին է երեւակայել թէ այս դէպքին լուրն ի Մարաշ և անտի ի Բերիտ և ի Բ. Դուռն ինչպէս կը հասնի և ինչպիսի ձեռնարկութեանց տեղի կուտայ: Յետ բազում հեռագրական խորհրդակցութեանց Դուռն այն սրտում կուտայ որ այնքան գլխի ցաւ պատճառով Ձէյթունն պատժուի և կատարեալ հպատակութեան բերուի: Առ այս պէտք է քաղաքին վերայ յղուի մեծ բանակ մի, թնդանօթաց և ռազմաթերթից լիւալի պատրաստութեամբ:

Հալէպի անդղիական հիւպատոս Մր. Հէնտըրսընի ևս այս ձեռնարկութեան մասին տեղեկութիւն կը տըրուի, որ խորհուրդ կուտայ կառավարութեան յետաձգել բանակին առաքումն, խոստանալով ըստ կարի աշխատիլ խնդրոյն բարւոք լուծման: Մր. Հէնտըրսըն կը խնդրէ Մարաշի ամերիկեան հիւպատոսէն երթալ փութով ի Ձէյթուն և ամեն բան իմանալով իրեն տեղեկագրել

մանրամասնօրէն. ինչ են զժողովութեանց և խռովութեանց հիմնական պատճառներն, եթէ իրօք ապստամբ են, հրաւիրել զնոսա ի հպատակութիւն որպէս զի առանց արիւնհեղութեան վերջանայ խնդիրն: Ամերիկեան հիւպատոսն մեծ հապճեպով կիրակի առաւօտ ճամբայ կ'ելնէ և երեկոյին Ձէյթուն հասնելով բոլոր քաղաքն ոտքի վերայ կը գտնէ խորապէս յուզեալ: Կը տեղեկանայ թէ անտէր ժողովուրդն արդէն իրենց սպառնացող ահագին վտանգն նախատեսելով և ի փորձոյ գիտնալով թէ իրենց իրաւունքն չպիտի կրնան հասկցունել և ընդունել ընել, բոլորովին յուսահատած թուրք կառավարութեան, նոյն օր չորս եկեղեցեաց մէջ հսկում ըրած և թագաւորաց Թագաւորին աղօթք և աղաչանք մատուցած են ծովապահութեամբ, միանգամայն իրենց հրապաններ սրած իւղոտած, վառօդ և կապար պատրաստած են: Շափալը ոմն եկած է — լուրն քաղքին մէկ ծայրէն ցմիւսն փայլակի արագութեամբ կը տարածուի, փողոցներն բազմութիւն կը խռնուի, Աստուած մեզ օգնութիւն յղած է՝ կ'ըսեն և յուսոյ նշոյլ կը փայլի ամենուն զիմաց վերայ: Աստուած, արդա՛ր ես Դու, արդարութիւն արա՛ աղօթքն ամեն կողմէ կը հնչէ:

ՀԱՅԱՍՏԱՆ

Հարաւայեւ

ՆԱԽԵԿ ՎԱՆԵՆ

Վան, 11 Մայիս 1892

... Ձեր ժողովրդեան վիճակին դալով, կրնամ ըսել թէ աստիճանաբար կը բարւոքի այն: Իրենց վիճակը բարւոքելու լաւագոյն եղանակն է բարւոքել իրենք զիրենք: Իրենց ապագայն կ'ապահովի այն օրինաց զօրութեամբ որ կ'ուղէ յարմարագունին յետակեցութիւնն:

Լաւագոյն մարդիկն կը թուին տեսնել թէ բան չչահուիր յանկարծական և բուռն միջոցներով: Սակայն բազում խօստաք գլուխներ կան, անգէտ բանին մեծութեան և դժուարութեանց՝ որք ազգին վարկն կը կոտրեն և կ'սկսածելի կ'ընեն:

Կայ նաև կոյր նախապաշարում ոչ սակաւ պատուաւոր մարդոց կողմանէ ընդդէմ այնոցիկ որք իրենց լաւագոյն բարեկամքն են:

Բան զամենայն աւելի յուսահատեցուցիչ բանն որ կը տեսնեմ է ներքին անդադար և դառն կռիւն Հայոց մէջ: Չափազանց անհատականութիւնն իրենց ազգային միութիւնն է: Բարձրախոհ և անչափախնդիր անձնութիւն հանրային և հասարակաց շահուց յոյժ հազուադիւրէն է: Քաղաքին երեւելի Հայերն յօժար են իրենց անձնական փառասիրութիւն և հեռ իրարու դէմ յագեցունել հոգ չէ թէ որքան սուղի նստի: Այս կերպով զիրար վար կը քաշեն: Մեր ներկայ վալին չորս ամիսէ ի վեր եկած լինելով խիստ բարոյականի, ճիշդ կարգապահութեան և վարչային կարողութեան տէր մի մարդ կ'երևի: Չարք կ'սկսածեն ինմանէ:

Քաջալերական նշաններ ալ կան: Հայեր սկսած են զգալ և խոստովանիլ թէ վտանգաւոր միտումներ յառաջ եկած են: Հայրենիք և Արեւելք լրագիրներն համարձակապէս ուշադրութիւն հրաւիրած են պատկառանքի և հաւատոյ նուազման վերայ ժողովրդեան մէջ, ինչպէս նաև յոռի դրականութեան յաճախելուն և թոյլ բարոյականութեան վերայ:

Բոլոր իրենց թերութեամբ հանդերձ որոց շատք վերագրելի են պարագայից և պատմութեան, շատ յոյս ունիմ ես այս ժողովրդեան վերայ:

ՈՄՆ ՈՐ ՅՈՅՍ ՈՒՆԻ ՀԱՅՈՑ ՀԱՄԱՐ

ՆԵՄՆԿ ԵՊԻՊՏՈՍԷՆ

Գազիբէ Մայիս 10 1892

Տիրող գաղափարն այժմ ամեն ուրեք, ուրախ եմք ըսել, ընդհանուր միութեան մի խնդիրն է: Խոհուն և բանիբուն անձինք լա՛ւ ըմբռնած են սա անհերքելի ճշմարտութիւնը թէ, զօրութիւնն ի միութեան է:

Մէն մի հայրենասէր պարտի յիշել ժամանակա՛լից մեծանուն հայ բանաստեղծին սա գեղեցիկ տողերն թէ

«Միութեամբ լոկ Հայաստան
Թագեր կրեց չորս անգամ, ...
Զըլլանք ազգին ուխտադրուծ
Ուր միութիւն հոն է ոյժ»:

Անփորձներն են որ անփոյթ կը գտնուին դէպ ի միութիւն ձգտելու, անհեռատեսներն են միայն որ յամառութեամբ յարած կը մնան այս կամ այն կուսակցական ոգոյն առանց ի նկատի ունենալով միութեան ուժն ու կարեւորութիւնն: Զճմարիտ հայրենասէրք, սակայն, յար ի կարծիս լինելով հասարակաց շահուն և հայրենեաց արդար գատին, ի մի կը ձուլեն իրենց տկար ու ցրուեալ ուժերն և կաշխատին շրջահայացութեամբ ձեռն ի ձեռն: Այս վերջին գաղափարէն են եզրպատարնակ Հայոց գրեթէ մեծամասնութիւնը, մանաւանդ երիտասարդութեան կրթեալ և զարգացեալ մասը, որոց կուսակցական անուններն զգուսնք միայն ազդելով միութիւն, ընդհանուր միութիւն կ'ազդակեն: «Ըի ամենայն տուն րաժանեալ յանձն աւերի»:

Հոս, ի Գազիբէ, կեդրոնական յանձնախմբի ինը պատտ եղող Հայերս բաւական շատուր եմք, և կը յայտարարեմք ի գիտութիւն համայնից թէ ի պատեհ ժամուն երբ քուէարկութեան հրաւէր լինի մեք ևս պիտի մասնակցեմք յօժարութեամբ: Իցիւ թէ չուտով հասնէր այդ օր:

ՍՓԻՆԿՍ

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ Ի ՖՐԷՋՆՈՅ ՔԱՆԻՖՈՐՆԻՈՅ
Ֆրէջնոյ 10 Մայիս 1892

(Հետեւեալն պատճէնն է առանձին կարեւոր նամակի մի զոր հաճած է հաղորդել մեզ պատուարժան հայրենակից մի:)

Միւրելի հայրենակից եղբայր,

Վերջին նամակդ հոս հասած էր երբ ես բացակայ էի: Այս անգ զործ չգտնելուս համար իբր 100 մղոն դէպ ի Հարաւ ծառայական ու ծանր գործի գնացի և ամիս ու կէս չարաշար աշխատելէս ետքը վերստին տեղըս դարձայ: Այս եղանակին մէջ դժուար է ինձի պէս մէկու մը, որ արհեստ չունի, գործ գտնել: Արհեստ ունեցող Հայերը այնքան երջանիկ կ'ապրին որքան որ կալուածատէր Հայը կ'ապրի:

Այս քաղաք որ շատ մաքուր և գեղեցիկ փոքր քաղաք մ'է, 18 տարի առաջ ամայի անապատ է եղեր, սակայն այժմ ունի 16 հազար բնակիչ, որոց 2 հազար 5 հարիւրն անցեալ աշուն աւելցաւ: Այս քաղաքի և շրջակայից մէջ է Քալիֆօրնիոյ Հայ գաղթականութիւնը: Հայերին շատերը ինքնուրոյն գործեր ունին, օրինակի համար 4 ժամագործ և օսկերիչներ կան, 2 դեղագործ 5 կօշկակար, 7 դերձակ, 4 սափրիչ, 3 վաշխառու, մէկ տպարան, մէկ տան կահկարասիք ծախող, մէկ ճաշարան, մէկ մսավաճառ ևն: Կան ուրիշ Հայեր ալ որ ձեռքի վրայ առուստուր կ'ընեն: Մեծ թուով Հայեր ալ կան որք կալուածատէր են, իսկ մնացածներն, որք ինձի պէս են, օրականով կը գործեն: Այս վերջիններու վիճակն ամենադժուարն է, քանզի բացօդեայ տեղեր, երբեմն ալ անձրևի ստիկ, և ամառն ալ երբեմն հարիւր աստիճանէն աւելի տաքութեան տակ, այգիներու ու չոգե-

կառքի ճամբաներու վրայ պիտի գործեն: Իմ վերջի գործս էր այգիները ջրելու համար խրամներ բանալ, և այդ այնքան ծանր գործ էր որ գիշերները չէի կրնար քնանալ մարմնոյս զանազան մասանց սաստիկ ցաւերէն: Թէև այսպիսի գործերու սովորած չէի, բայց նեղութիւնը ինձ սովորեցուց և այս չորքաշուութիւնը ինձ օրհնութիւն եղաւ, որով կարողացայ ընտանիքս քովս ունենալ: Երկու աշուններ ես ինձի գործի տէր եղայ և 50ի չափ անձինք գործածեցի գործիս մէջ, խաղող քաղելու համար: Զգիտեմ ուրիշ անգամ ալ այնպիսի պատեհութիւն պիտի ունենամ թէ ոչ միայն սա գիտեմ լաւ որ իմիններս լաւ ապագայ պիտի ունենան: Տղոցս երկուքն ալ արհեստ կը սովորին, և կը յուսամ թէ եկող տարի մէկն առանձին իրեն գործ պիտի կրնայ բանալ: Եթէ Հայ մը հոս գալ ուզէ, այս ըրած պատմութիւնս աչքին առջև ունենալու է: Եթէ մէկը 1000 թաւէրով հոս հասնի, կարէ ինքըն իրեն գործ մ'ընել, և օրականով ծանր աշխատութիւններէ ազատիլ: Ընտանիքչունեցողներ 500թ. ով կըրնան գործ մ'ընել: Ան Հայեր որ գործ բռնած են, շատ երջանիկ են: Իրենց ներքին կեանքը չգիտեմ, բայց արտաքուստ լաւ մարդոց կարգն անցած են: Առանց բացառութեան, գրեթէ բոլոր Հայեր — ինձմէ զատ — տան տէր են, և ոմանք իրենց բնակած տունէն զատ 2—3—4 տուններ շինած և վարձու տուած են:

Ունեցած խալիկներուս երկուքը ծախեցի 250 թ. ի, և ատոր փոխարէն 2 տան համար երկիր գնեցի: Թէևս ստակ չունիմ և օրականով կ'ապրիմ, բայց բնաւ յուսահատած չեմ, այլ կարծեմ թէ մեծ քաղաքներու մէջ բընակող Հայերէն ալ երջանիկ եմ: Գոնէ լայն հորիզոն, մաքուր օդ, և յուսալից ապագայ ունիմ:

ՀԱՅ ՄԸ

ՀԱՅՈՑ ԽՐԵՆՈՒՍԵԿԱՆ

ՄԻՆԵՐՆՈՒԹԻՒՆ

Ի ՍՈՌԲԱՔԱՅԵ

Ճավայի Սուրբայա քաղաքին Հայոց համակրելի ընկերութեան կանոնադրութենէն կը հանեմք հետեւեալ մասն:

ՆՊԱՏԱԿ

Միաբանութեան նպատակն է ըստ նիւթական և ըստ բարոյական կարողութեանց իւր այնպիսի ազգօգուտ գործս յառաջացունել կամ նպաստել ի նոյն՝ որք վերարերին Հայրենեաց ազատագրութեան:

ՄԻՋՈՑԻ ՆՊԱՏԱԿԻ

Միաբանութիւնս ունիցի ընթերցարան մի՛ ուր գըտանիցին ազգային լրաթուղթք որով մարթ է լիովին տեղեկութիւնս ունիլ ի մասին ազգայնոցս և Հայրենեաց:

Կարէ Միաբանութիւնս որոշ ժամանակ ազգօգուտ գործոց առթիւ ի ձեռն շրջաբերականի գումար հանգանակել առ ի հոգալ կամ առաքել ի նպաստ այդոցիկ գործոց, առ որս Միաբանութեան գանձանակն եւս կարէ նպաստել ըստ կարեացն իւր:

Միաբանութիւնն կարէ թղթակցիլ ընդ ազգային ա՛յլ Միաբանութեանց թէ՛ յօգուտ և թէ՛ ի յառաջացումըն Միաբանութեան նպատակին:

Վարչական Ժողով

«Հայոց Խրախուսական Միաբանութեան»

Նախագահ
Քարտուղար

Մ. Տէր Դ. Ս. Նահապետեան
Յ. Տէր Կ. Յորդանանեան

Գանձապահ Սամ Յովակիմ
Խորհրդատու Անդամ Գ. Խ. Թաթէսեան
" " Ե. Գ. Տէր Կարապետեան

Սուրբաշայ
11 Յունվար 1892 (Ն. Տ.)

Ծան.— Նամակը վերաբերելի «Հ. Խ. Միաբանութեան պարտին ուղղել Բարաուդարութեան հետեւեալ հասցէի:

C. JORDAN ESQ.
Souiabaya (Java)

ԵՅԼ ԵՒ ԵՅԼՔ

ԲԱՂԱՔԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Ռուսչուքէն Մայիս 26ին կը գրէ մեր թղթակից:

Ամոռոյ 16ին հոս հասաւ Լեւոն Սիւլեան անուն կաթողիկ վատազգի թրքահոգի պաշտօնեայն, որ պաշտօն ունի Հայ տղոց թղթերն ու նամակներն թարգմանելով չարմաղան Սուլթան Համիտ Բ. ին ներկայել և անոր վախերն ու կասկածներն փարատել, որ Հայ յեղափոխականներ առթած են. և վասն որոյ Իսկիւսարցի Պէյլէր Պաղը ընկող Յարութիւն Խորեան իսկ պաշտօն ունի Լրտեսել բոլոր Դանուբաբնակ Հայ գաւառներ մինչ ի Մահառիստան, նկատելու թէ անդ հայ ազատականներ ի՞նչ խորհին և ի՞նչ գործեն և կամ մի՞թէ հնար իցէ որսալ սոցա, որպէս որսացին զվատն Թիւթիւնճիէֆ. տա ի խափանել Հայկական շարժումն որ կայ ամեն ուրեք:

ԱՒԵՐԱԿԱՆ ԲՈՒ

— Թղթակից մի հետեւեալ տողերն կը գրէ Ֆրէզնօյէն (Բալիֆորնիա) Յունիս 1 թուականաւ:

«Հայ ընտանիք կը շատնան հոս, և նորերու ալ կը սպասեմք: Բաղաքիս մէջ գործ ընող Հայեր չատ են, կարծեմ 30ի չափ խանութ անոնց կը վերաբերին: Յաւալի է սակայն որ բարձր փառասիրութենէ և Հայրենասիրութենէ զուրկ են շատերը. չնչին պատճառներով իրարու դէմ կ'եննեն, և յաճախ դատարանաց առջեւ կը հանեն իրենց դժուարութիւններն:»

Արեւելքէն նոր եկած Հայրենակից մի հետեւեալ տեղեկութիւններն գրած է մեզ Սան Ֆրանսիսքոյէն՝ հըրաւարակելու բաղձանք:

— Բնիկ Երզնկացի եմ. մօրուքիս համար Ամերիկա փախայ, որովհետեւ շատ մ'ընկերակից երիտասարդներու Գաութէմունի աքսոր զրկուիլն աչքովս տեսայ: Մօրուքնուն համար իրր յեղափոխիչ անպաւնեւ կարծուած էին, առանց սպացոյցներու: Թուրքիոյ երկիրն զթութեան երկիր մը դարձած է. ձրի չոր հաց կերցնել բանտարկելոց. բանտին գործարանները մաքրել տալ. թուրք բանտարկեալներու ծառայութիւն ընել: Կարճահասակ էթէմ օնպաշին ալ՝ բռնած ճամբորդը ուղղակի կառավարութիւն կը տանի, կարծելով որ ամեն եկող ճամբորդներ յեղափոխականներ են: Նշան Արծրունին՝ Պարնեցի Պ. Երգիչը՝ որ Պոլսէն կուգար, Գրիգոր Աղան և խեղճ անուսում քահանան ոտ բանտին մէջ հասարակ ընթերցում սովորեցաւ, այս ամենը բռնող և ձերբակալողն սա մարդն էր որ ամբողջ Երզնկացի ժողովուրդը կը ճանչնայ:

... Խեղճերուն քովը բան մը չըլլալիքէ մէկ մ'ալ տեսան որ գրպաններուն մէկ մէկ երգի կտորներ ելան, «Հայ եմ» «Հայ եմ» ո՞վ կրնայ ինծի դնել դէմ. այսպէսով դեռ ցայսօր բանալ կը ճգնին:

ԲԱՂՂ

— Նիւ եորքի «Փրէս» թերթն հեռագիր մի հրատարակեց ծանուցանող թէ Մշոյ կողմն Սասնոյ Հայք ապստամբած են և թէ իրենց վերայ յղուած թրքական զօրքն յաղթուած է:

— «Մշակ»ի մէջ կը կարդանք. — Կուկուենտի և 43 Հայերի գործը վերջացաւ: Նահանգական դատարանը կայացրեց իւր վճիռը և դատապարտեց՝ Սարգիս Կուկուենտին 20 տարի տաժանակիր աշխատանքներին, 25 մարդկանց 8ից մինչև 15 տարի տաժանակիր աշխատանքներին, մէկին յանձնեց կալանաւորների խմբին, 16 հոգի արգարացրած են:»

— «ԱՐԶԱԳԱՆԳԻ» մէջ կը կարդանք — «Մոսկուայի համալսարանի իրաւագիտութեան պրօֆէսոր իսկականպետական խորհրդական Ներսէս Ներսէսեանցը հաստատուած է իրր օրդինար պրօֆէսոր:»

— Մայիս 15ին ի Ս. Էջմիածին կաթողիկոսական ընտրութեան մասնակցեցան 67 պատգամաւորներ, որոնցմէ հինգն՝ երկուական ձայնով, որով քուէից ամբողջ թիւն եղած է 72: Քառանուն ցանկն յօրինուած է հետեւեալ անուններով— Խրիմեան, Մաթէսո եպ. Իգմիրեան, Խորէն եպ. Եդեսիոյ (Երեքն ալ միաձան անուանմամբ) և Երեմիա եպ. Տէր-Սահակեան Երուսաղէմի: Մայիս 17 ին վերջնական քուէարկութիւն կատարուեր է, որոյ արդեամբ Ամենապատիւ Տէր ՄԿՐՏԻԶ արքեպիսկոպոս ԽՐԻՄԵԱՆ անուանուած է միաձայնութեամբ՝ այն է 72 քուէով, և Գեր. Տէր Մաթէոս եպ. Իգմիրեան 50 քուէով: Այս վերջին երկու անուանք պիտի ներկայացուին Զարին, որ երկուքէն մին կ'ընտրէ կաթողիկոս, սովորաբար ընտրելով զայն որ առաջին ընտրելի անուանեալ է:

— Հայկ. Միութեան Յունիս 4ի նստին մէջ Տր. Այվազեան առաջարկեց որ Միութիւնն ընդհանրական հեռագիր մ'ուղղէ առ Խրիմեան Հայրիկ նորին Ամենապատուութեան միաձայն անուանման առթիւ իրր կաթողիկոսական առաջին ընտրելի: Այս առաջարկ բուռն և երկարաձիգ ծափահարութեամբ ընդունուեցաւ և ի գործ դրուեցաւ իսկոյն:

Հայկ. Միութեան Յունիս 18 նստին մէջ պիտի անենախօսէ Տր. Հիւրմիդ:

ՆԱԽՈՒ ՄԷՋ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԱԾ ՀԱՅԵՐ

Կ. Պոլսէն «Տէյլի Նիւզ»ին գրած են հետեւեալն — Իզար բրիտանական շոգենաւ. Կ. Պոլսէն Մարտիլիա երթալու ատեն Տարտանէլի մէջ կանգ առած է անդղիական փոխ-հիւպատոսին կողմանէ, որ հրաման յղած է նաւապետին յանձնել թուրք ոստիկանութեան տասն Հայեր: Նաւապետն առաջ մերժած էր այս ճամբորդներն յանձնել, բայց ստիպուեցաւ հնազանդիլ փոխ-հիւպատոսի հրամանաց: Այս ձերբակալման պատճառ միայն սա կը տրուի թէ Հայերն, իրր թրքահայատակ, Իրաւունք չունէին Թուրքիայէն մեկնելու: Թղթակիցն կը յաւելու թէ չհասկցուի ինչու այս Հայեր բրիտանական դրօշակի հովանիէն զրկուեցան քանի որ ս և է ոճիր գործած չէին:

— Ըստ «Տէյլի Նիւզ»ի թրքական ազատական կուսակցութիւնն Կ. Պոլսոյ մէջ 1876ի Սոհմանադրութեան օրինակներէն մեծ քանակութեամբ ցրուած է. Սուլթանըն հրաման ըրած է որ բռնեն և սլորեն այդ բոլոր օրինակներ:

Տր. Գարրիէլեան (ոչ «Հայք»ի խմբագիրն, այլ այլ ոմն համանուն) կը հրատարակէ այս օրեր ի Ֆիլաստէլիա անգղիէիէն լեզուաւ Հայոց Պատմութիւն մի:

ՀԱՅԵՐ յԱՄԵՐԻԿԱ

Լին քաղաքին մէջ Հայերու թիւն երկու հարիւրն կանցնի այժմ: Տեղւոյն ազգայիններէն խումբ մ'երի տասարդներ հրաւիրած էին «Հայք»ի խմբագիրն այցելել Լիննաքնակ Հայերն և ատենախօսել Յունիս 11ի շաբաթ երեկոյին: Սրահն ի էր եռանդուն և համակրելի բազմութեամբ մի, որ իմացող ուշադրութեամբ ունկնդրեց ատենախօսին խօսքերն 75 վայրկեան շարունակ: Մեր այս ուղեւորութեան միջոցին աւելի համոզուեցանք թէ Ամերիկայի Հայերն արդարեւ կ'օգտին Միացեալ Նահանգաց քաղաքակրթութենէն: Լիննի մէջ մշակեալ երիտասարդներն բաղդատարար մեծ թիւ մի կը կազմեն, և նրաթապէս ալ շատ յաջող են:

Լիննի երիտասարդութիւնն շատ կազդուրեց զմեծ իւր ջերմ համակրութեան ցոյցերով: Մեր անկեղծ շնորհակալիքն կը մատուցանեմք նոցա հրապարակաւ: Ճշմարիտ քաջալերութիւնն այն ատեն կը թափանձէ Հայրենասիրին սրտի խորքն երբ զգօն և իմացող համակրողներէ կուգայ: Սյդպէս գտանք մեք Լիննի երիտասարդաց ընտիր դասուն համակրական ցոյցերն:

Լիննէ վերադառնալու պահուն անակնկալ առիթ մ'ընծայուեցաւ մեզ Պոսթընի Հայոց Հայրենասիրական Ընկերութեան կիրակի երեկոյի նոսին ներկայ լինելու և խօսելու: Պոսթըն Ամերիկայի Աթէնքն է, և մեք պատճառ ունիմք կարծելու թէ Պոսթընի Հայ գաղթականութիւնն ալ մեր յառաջդիմագոյն գաղթականութիւնն է:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Շնորհակալութեամբ ընդունեցանք ՀԱՅՐ Յ. Վաթ. ԹՈՐՈՍԻ «Ընտիր Հայկազունքն», Բ. տպագրութիւն, յորում հեղինակն բանաստեղծական սեռով այլ արձակ և պարզ լեզուաւ կուտայ հետեւեալ ընտիր Հայերու կենսագրութիւնն և պատկերներն. — Հայկ, Տիգրան Բ., Արտաշէս Բ., Սաթենիկ, Սրբուհի Սանդուխտ, Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Մեծն Տրդատ, Սրբուհի Սէլէն, Սրբուհի Խոսրովիդուխտ, Մեծն Ներսէս, Մուշեղ, Ս. Սահակ, Ս. Մեղրուպ, Ղեւոնդ Երէց, Վարդան, Շուշան Վարդենի, Մովսէս խորենացի, Վահան, Ներսէս Կամսարական, Գայլ Վահան, Անանիա Շիրակացի, Աշոտ Ա., Ս. Գրիգոր Նարեկացի, Ս. Ներսէս Շնորհալի, Ս. Ներսէս Լամբրոնացի, Լեւոն Ա.: Գինն է հինգ Փրանք, տպեալ ի վանս Ս. Ղազարու Վենետիկ:

Շնորհակալութեամբ ստացանք Խ. ՄԱԼՈՒՄԵԱՆԻ (օգնական խմբագիր «Մշակ»ի) «ԽՐԻՄԵԱՆ»-ն որ է կենսագրական տեսութիւն մի 96 երեսներէ բաղկացեալ, հանդերձ փառաւոր պատկերով Հայրիկին: Գինն է 40 կոպէկ, տպեալ ի Թիֆլիզ:

Լոյս տեսաւ ԴԱՍԱԽՈՐՈՒԹԻՒՆ ՌՈՒԲԻՆԵԱՆ ԴԸ. ՐԱՄՈՑ, գրեց Հ. Կղեմէս Վ. Սիպիլեան, Վիէննա, Միսիթարեան տպարան: Գինն է 7 Փրանք:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՄԵՐՈՇԵՐՆ

(Չափաւոր օրինակներ միայն տպեալ)

Սոյն Մարգարան 128 երեսներէ բաղկացեալ և 36 ձեւերով բացատրեալ, ինքնուսուցիչ գրքոյկ մ'է զինուորական մարզանաց և մարտագիտական սկզբանց:

Գինն որեւէ հասցէի համար 50 սէնթ կամ երկու և կէս Փր: Վեց կամ աւելի օրինակներ գնողին, հարիւրին 25 զեղջ կը լինի: Կրնայ ստացուիլ «ՀԱՅՔ»ի խմբագրութենէն կամ ուղղակի հեղինակէն, հետեւեալ հասցէով, G. Casbarian, Gen. P. O. Brooklyn, New York U. S. A.

—«Չայն մի Արարատ Լեռնէն» գրքոյկն ծանուցած և անոր մասին տեղեկութիւն տուած եմք տակէ առաջ: Գրքոյկն անգլիերէն լեզուաւ գրուած է և կրնայ Ամերիկացւոց նուէր տրուիլ, որմէ կարող են Հայաստանի վըշտաց և ըլձից մասին տեղեկանալ: Մեր Հայրենակիցք այդ գրքուկէ գնելով ուրեմն կրկնակի օգտակար գործ մի ըրած կը լինին, Հայաստանն Ամերիկացւոց ծանօթացու և միանգամայն նպաստած լինիլ Հայ գաղայուն երիտասարդի մի ուսման ծախուց որ ծառայած է և որ այժմ կը պատրաստուի իւր Հայրհենաց ու ազգին լաւ և ծառայելու:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՉԱՅՆ ՄԻ ԱՐԱՐԱՏ ԼԵՌՆԷՆ, անգլիերէն տետր մ'է 54 երեսներէ բաղկացեալ, որ կը պարունակէ հեղինակին - Տիար Միհրան Պաղտատարեանի - կենսագրութիւնն, Օսմանեան Պատմութեան վերայ ակնարկ մի և և Հայոց Պատմութեան բովանդակութիւն մի: Տետրին վերջին երեսներն նուիրեալ են Հայոց պէտքերն և բաղձանքն ցուցնելու:

Այս տետր կը վաճառուի 50 սէնթի - դիմել հեղինակին հետեւեալ հասցէիւ — Mr. M. Baghdasarian, 411 Walnut St. Des Moines Iowa, U. S. A.

ՀԱՅԵՐ Ի ԼԻՆՆ: Լիննի մէջ Հայերն շատ նախատինք կրած են Իռլանտացի գործաւորաց ձեռքն: Իռլանտացիք նախանձով և ատելութեամբ կը նային Հայերուն իբր իրենց հացն յափշտակողներու: Անկարելի բան էր որ Իռլանտացիներ հանդիպէին Հայերու փողոցի մէջ առանց հայհոյելու կամ այլապէս անհաճոյ լինելու: Ներկայէս մի քանի ամիս առաջ դարձեալ մեր Հայրենակիցներէ երկուքն կ'անարգուն երեք Իռլանտացիներու կողմէն: մերայնոց մին արդար զայրութիւ բռնկած կը հանէ դանակն և գաղանամիտ նախատողաց միոյն հինգ հարուած կուտայ, միւսին ալ մէկ: Պատուոյ վրէժին դիր այս Հայն կը փախչի, և Իռլանտացի վիրաւորն երկար ատեն հիւանդանոցի մէջ կը մնայ վտանգաւոր վիճակի մէջ: Այդ դէպքէն ի վեր Իռլանտացիք կակղցած են և հարստահարութիւնք գրեթէ դադարած:

Այս փորձն ալ կը ցուցնէ թէ անկիրթ և վայրենամիտ հարստահարիչներ զգաստացունելու համար յողուածներ, խմբագրական խորհրդածութիւնք, բարոյական զանազան միջոցներ, յորդոր խրատ, յանդիմանութիւն չեն բաւեր ընել ինչ որ հարստահարելոյն բազկի հարուածներն կրնան: Լիննի բուն Ամերիկացիներն ու կրթեալ և ազդեցիկ մարդիկ Հայերուն համակիր և կարեկից էին և թերթերու մէջ ալ ինպատո մեր Հայրենակցած բանք գրուած էին, բայց այն Իռլանտացիք որք օտարաց համակրութենէն առ Հայս չէին ազդուեր, բուն Հայու մի արիական վարմունքէն խորապէս ազդուեցան, զի հասկցան փորձով թէ Հայն ալ կրնայ զարնել:

Հարուած կայ որ ոչ միայն արդար է այլ և օրհնեալ:

L'ARMENIE-ARMENA

Անգլիերէն և Ֆրանսերէն ամսաթերթ երկլեզուեան Տարեկան բաժնեգինն է 2 թալէո և կէս կամ 12 Փր և կէս

Խմբագիր M. TCHERAZ

33 DE VERE GARDENS, LONDON, W.

ENGLAND

THE WORCESTER MECHANICS SAVINGS BANK
311 Main St. Worcester, Mass.

ՎՈՒՍԹԸՐ ՄԵԲԵՆԻԲՍ ՍԵՅՎԻՆԿՍ ՊԵՆԲ

Վուսթըրի Հայերն իրենց խնայողութիւններն կըր նան ապահովապէս դնել վերայիշեալ պանքային մէջ, որ շահ ալ կը վճարէ ցուցվար, Ապրիլ, Յուլիս և Հոկտ. ամսոց կէսէն հաշուելով:



REGULATE THE
STOMACH, LIVER AND BOWELS,
AND
PURIFY THE BLOOD.
A RELIABLE REMEDY FOR
Indigestion, Biliousness, Headache, Constipation, Dyspepsia, Chronic Liver Troubles, Dizziness, Bad Complexion, Dysentery, Offensive Breath, and all disorders of the Stomach, Liver and Bowels.
Ripans Tabules contain nothing injurious to the most delicate constitution. Pleasant to take, safe, effectual. Give immediate relief.
Sold by druggists. A trial bottle sent by mail on receipt of 15 cents. Address
THE RIPANS CHEMICAL CO.
10 SPRUCE STREET, NEW YORK CITY.

Ripans Tabules are of great value.
Ripans Tabules cure headache.
Ripans Tabules cure constipation.
Ripans Tabules : for liver troubles.
Ripans Tabules : a family remedy.
Ripans Tabules : for sour stomach.

ՓՈՒՆՆԵԿԵՐԻ

Թուրքիա դրամ զրկելու համար ոչ մի տուն Ամերիկայի մէջ կրնայ տալ այնչափ զիւրութիւն և ներշնչել այնչափ վստահութիւն որչափ կուտայ Կիւլպէնկեան մեծ տունն որ ճիւղեր ունի Թուրքիոյ բոլոր կողմերն և եւրոպիոյ նշանաւոր քաղաքացի մէջ: Ամերիկայեան Հայք որ դրամ զրկել կ'ուզեն ի Թուրքիա կրնան ամենայն վստահութեամբ դիմել առ Տի. Կիւլպէնկեան, 53 Cedar St. N.Y.

ՅՈՎՀԵՆՆԵՍ Մ. ՀԵՅԿՈՒՆԻ

Պատիւ ունի ծանուցանել թէ իւր 1554 B. Way, 46 և 47-րդ Փողոցներուն միջև

Constantinople Bazaarի (Բոնսթանթինոփլ Պազար) մէջ ունի թրքական մեծաքանակ ձեռագործներ (embroidery) գորգեր (խալի), ուրիշ զանազան թուրքիոյ ապրանք, և կը ծախէ դիւրագին գներով այն Հայերու որք կ'ուզեն ամարանոցներն և այլ տեղեր երթալ վաճառակաթեամբ, և անոնց ևս որք կ'ուզեն ընծաներ տալ իրենց բարեկամներուն և գործարանապետներուն: Թէ ապրանքահաւաքութեան և թէ գներու չափաւորութեան մասին կրնամք կատարելապէս վստահեցունել մեր Հայրենակիցները, ինչպէս արդէն շատեր փորձով գիտեն:

Հայեր

Երբ նոր գլխարկի, օձիքի կամ ու է արական հանդերձեղենի պէտք ունենաք, գնացէք New York Hat House, 14 Front Street, Worcester, որ Մէյն փողոցին մօտիկ է, հոն պիտի գտնէք լաւ ապրանքներ միայն, և շատ աժան:

LANTELME'S

HOTEL & RESTAURANT,

40 UNION SQUARE NEW YORK CITY

16 և 17 թիւ փողոցներու միջև արեւելեան կողմն: —Ընտիր Գաղղիական Խոհարարութիւն—
Նախաճաշ 40 և ճաշ 75 սէնթ

N. DESCHAMPS

Ն. ՏԵՇԱՆ

Վուսթըրի Main (Մէյն) փողոցին 259-րդ թիւ խանութըն դիմացկուն և աժան կօշիկներ և մոյկեր կը վաճառուին: Պարոն Տէշան շատ քաղաքավար և պարկեշտ գործ ընող մէկն է և ամեն այցելու իրմէն գոհ կը մնայ: Փորձէ և պիտի համոզուիս:

BUSH & CO

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

Պ Ե Վ Ե Ք Ո Ր Ս

(Հաստատեալ ի 1849)

56 FRONT STREET WORCESTER, MASS.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

HAGOPIAN

PHOTO-ENGRAVING CO

3 Great Jones St. New York

Engraving for all purposes of illustration in line & half-tone.

P. SHALJIAN

9 SPRUCE ST. NEW YORK

ԳՐԲԵՐ ԵՒ ՏԵՏՐԱԿՆԵՐ ԿԸ ԿԱԶՄԵՆԲ

ԳԻՆ ԶԱՓԱԻՈՐ

Կ Ա Զ Մ Ը Ն Տ Ի Ր

MARK F. COSGROVE

ԿՈՇԻԿՆԵՐ, ՄՈՅԿԵՐ ԵՒ ԲԸՊՊԸՐՆԵՐ

78 Front St., Corn Bigelow Court

WORCESTER MASS.

Այն է ամենէն աղէկ խանութն Վուսթըրի մէջ, ուր կրնաս գնել ամեն տեսակ կօշիկներ մոյկեր, և կօշիկի ըզպաւըներ: Հրամէ եկուր անգամ մը և տես թէ ինտոր լաւ ընդունելութիւն կուտանք մեզ այցելող Հայերուն:

PHARMACIE FRANCAISE,

NORBERT FRANCK.

311 7th AVENUE,

NEW YORK.

Դեղագիրք կը պատրաստուին խնամով

— «ՀԱՅՔ»-ի 1891 տարին ամբողջ կապուած կը ծախուի 2 թալէն 5 սէնթի:

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն
Մ. Ս. Գ Ա Բ Ր Ի Է Լ Ե Ա Ն